ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 117- Ա 25 հունիսի 2015 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՎԻՃԱԿԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով
Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ վիճակը ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

   Բավեյան Սաշա – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ /նախագահ/
   Մակարյան Ժանետա – ՀՀ ԱՆ ԱՊՏ Գեղարքունիքի մարզային կենտրոնի պետի տեղակալ /համաձայնությամբ/
   Գասպարյան Ավետիք – տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի տեղակալ
   Բուդումյան Խաչատուր – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
   Սաֆոյան Աննա – մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ:
2. Համայնքների ղեկավարներին՝ աջակցել հանձնաժողովի անդամներին՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում ուսումնասիրություններ կատարելու ընթացքում:

3. Հանձնաժողովին (նախագահ՝ Ս. Բավեյան)՝ աշխատանքները սկսել 2015 թվականի հունիսի 24-ին և ավարտել հուլիսի 1-ին:

4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ